**Հայտարարություն**
**Հայաստանի Հանրապետություն**

**Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում թիվ 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում Բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ և բժշկական կահույք արգանդի պարանոցի քաղցկեղային և նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար, կազմված 2 Լոտից**
**Վարկ՝ թիվ ՄԶԸ-5222-ԱՄ**

**Մրցույթ թիվ՝ CR4/NCB/A-G/013-15**

Հայաստանի Հանրապետությունը, Միջազգային զարգացման ընկերակցության աջակցությամբ իրականացնում է Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել Բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ և բժշկական կահույք արգանդի պարանոցի քաղցկեղային և նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար, կազմված երկու լոտից:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը հայտարարում է մրցույթ՝ **Բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ և բժշկական կահույք ձեռք բերման արգանդի պարանոցի քաղցկեղային և նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար:**

**Լոտ 1** – Բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ արգանդի պարանոցի քաղցկեղային և նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար **#CR4/NCB/A-G/013-15/1**

**Լոտ 2** – Բժշկական կահույք արգանդի պարանոցի քաղցկեղային և նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար **#CR4/NCB/A-G/013-15/2:**

Մրցույթը կանցկացվի ՎԶՄԲ Վարկերի և ՄԶԸ վարկերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ ՀԲ ուղեցույցների շրջանակներում Ազգային մրցակցային մրցույթի (NCB) ընթացակարգերի համաձայն (2011թ-ի հունվար, վերանայված հուլիս 2014թ.) և հայտ կարող են ներկայացնել Ուղեցույցների շրջանակներում սահմանված պահանջներին համապատասխանող բոլոր հայտատուները: Ի հավելումն, խնդրվում է հղում կատարել կետեր 1.6 և 1.7-ում Համաշխարհայի նբանկի՝շահերի բախման վերաբերյալ քաղաքականությանը:

Հետաքրքրված հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ից (էլ. փոստ՝ procurement@healthpiu.am; info@healthpiu.am)

Մրցույթային փաստաթղթերի ամբողջական փաթեթը, հայերեն լեզվով, հետաքրքրված հայտատուները կարող են ձեռք բերել ներքոնշյալ հասցեից, գրավոր դիմում ներկայացնելու պարագայում, ինչպես նաև **20,000 ՀՀ դրամ/համարժեք ԱՄՆ դոլար գումար ներքոնշյալ հաշվարկային հաշիվներին փոխանցելուց հետո՝**

*Մրցույթային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է անվճար բեռնվել նաև www.gnumner.am (http://gnumner.am/am/category/129/1.html) կայքից: Այնուամենայնիվ, ,Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակե ՊՀ պատասխանատու չէ*

*<u>վերոնշյալ կայքից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցույթային փասփաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:</u>*

- ՀՀ Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարան- ***900000902123*** հայկական դրամային հաշիվ-ՀՀ դրամ
- ՀՀ Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարան- ***900000902156*** դոլարի տարադրամային հաշիվ-ԱՄՆ դոլար

Մրցույթային փաթեթները պետք է ներկայացվեն ներքոնշյալ հասցեով՝ **մինչև 2015թ. դեկտեմբերի 25-ը, ժամը 10:00:** Մրցույթային փաթեթները կբացվեն ներկա գտնվել ցանկացող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ներքոնշյալ հասցեում **2015թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 10:05: Մրցույթային փաթեթների՝ էլեկտրոնային տարբերակով ընդունում չի թույլատրվում:**

Նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված մրցույթային փաթեթները կմերժվեն:

Բոլոր մրցույթային առաջարկները պետք է ուղեկցվեն Հայտի ապահովման երաշխիքով (բանկային կամ ապահովագրական) Լոտ1-ի համար ստորև նշված գումարով և արժույթով և Հայտի երաշխիքային հայտարարագրով Լոտ 2-ի համար համապատասխանաբար.

***Լոտ 1: – 3,000 ԱՄՆ դոլար***

*Նշում: Երկու լոտերի համար մրցույթին դիմելու դեպքում, հայտի երաշխիքը և հայտի երաշխիքային հայտարարագիրը պետք է ներկայացնել առանձին, քանի որ գնահատումը կատարվելու է ըստ լոտերի*

**Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ**
**ք. Երևան 0051, Կոմիտասի պող. 49/4, 5-րդ հարկ**
**Հեռ.՝ (+374 10) 29 75 36; 29 75 37**
**Էլ. Փոստ: info@healthpiu.am procurement@healthpiu.am**
**Տնօրեն Նելսոն Ջուլոյան**